բաւորք 'ի մէջ բոցոյն, կամ դահավէժ դարահոս մեռանէին։ Դադարեաց հուրն և սուրն և մնացին երկու և եթ դրունք Տաճարին և մասն մի դաւթին կանանց։ Իսկ յանդգնագոյնք 'ի խռովչացն անցեալ գործեցին պատնէշ 'ի քաղաքին ամրանալ անդէն, իբրեւ չտուաւ նոցա թոյլ երթալ 'ի բաց ազատութեամբ, ամրացան 'ի դղեակն Սիոնի 'ի վերին քաղաքի, և կոտորեցին անդ իսկ և իսկ 8000 ոգի յազգակցաց իւրեանց՝ որ անդէն ամրացեալ էին։ Երուսաղէմ տուաւ յաւար զօրացն, և ապա լուցեալ այրեցաւ անթիւ և անհամար դիակամբքն։ Յետ այնորիկ կատարեալ Տիտոս զպատրաստութիւն մեքենայիցն՝ սկսաւ հարկանել զդղեակն Սիոն. վհատեցան խռովիչքն, իբրեւ չկարացին փախչիլ՝ մտին 'ի գետնափոր տեղիս եւ ընդ կամարօք. հեղան ղեղան Հռովմայեցիք 'ի փողոցսն եւ կոտորեցին մինչեւ ցերեկոյ եւ զգիշերն ամենայն տոչորէր հուր։ Եւ մտեալ Տիտոսի 'ի քաղաքն զարմանայր ընդ ամրութիւն պարսպացն՝ մանաւանդ երեցունց գլխաւոր աշտարակաց, և ասէր. «Աստուծոյ օգնութեամբ մղեցաք զպատերազմն։ Աստուած իսկ եհան զՀրէայսն յամրոցաց աստի, զի զի՞նչ ձեռնհաս էր ձեռն մարդոյ կամ գործի յաշտարակս այսոսիկ»։ Եւ չ'էառ յանձն ընդունիլ զպսակն յաղթութեան զոր առաքեցին նմա իշխանք Ասիացւոց ըստ սովորութեան ժամանակին. զի ոչ իմ ինչ էր՝ ասէր, յաղթութիւնն, այլ Աստուծոյ։

Գերեալքն փակեցան 'ի դաւթին կանանց եւ անդէն ընտրեցան. եւ կոտորել Տիտոս զխռովիչսն և զաւազակսն. զերիտասարդսն սահմանեաց 'ի շուք յաղթանակին իւրոյ, իսկ որք 17 ամէնից 'ի վեր էին, հրամայեաց տանել յԵգիպտոս 'ի գործ աշխատութեան և առաւելսն քան զնոսա տալ 'ի խաղս սպանութեան թատերց եւ զկարի մանկագոյնսն առնել վաճառակուր։ Յաւուրսն ընտրութեան մեռան 'ի սովէ 11,000 ոգիք, կէսք ինքնակամ եւ կէսք առ պահապանացն դաժանութեան։ Առաւել քան զհարիւր բիւր մարդկան 'ի պաշարմանն մեռան. իսկ թիւ համարոյ գերելոցն հասանէր 97,000. և ըստ Յովսեպոսի 110 բիւր։ Յովհաննէս Գիսկալացի եւ Սիմոն առ քաղցուն վտանգի ելին յորջուց իւրեանց 'ի գետնափոր կամարացն. նա դա-